ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «23 » հունվարի, 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03-Ա

ՆԱՐԻՆԵ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ կետերը, և հաշվի առնելով «Հ3» հեռուստաընկերության «Հաջողության գրավականը» հաղորդաշարի հեղինակ Նարինե Մերուժանի Սահակյանի՝ գիտության ոլորտում հրապարակումների և գիտության մասսայականացման աջակցության գործում ունեցած զգալի ավանդը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Նարինե Մերուժանի Սահակյանին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի շնորհակալագիր:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ